ՎԱՐԴԱՏՈՆ - 108

300 ՏԱՐԻ ԱՆՃ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ԿՐԿԻՆ ԽՈՍԵՑ ԵՐԵՔ ԼԵԶՎՈՎ ՈՒ ԿՐԿԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ ԿՈՉԵՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Դավիթ Ջանազյան

Իսկ եկողը կրկին վարդով ու խոսքով իր երախտիքն ու մեծարումը բերեց արեւելք միավորող հասարակ ռամիկին, անարդարության, թշնամանքի ու նամարդության դեմ խոսքով պայքարի ելած ռազմիկին, հայ, վրաց ու ադրբեջանական իրականության մեջ առաջին խաղերի հեղինակին եւ վերջապես, անմնացորդ Սիրո երգչին, ում համար կուռք էր բացսիրտ ու բազմերանգ Վրաստանը:

Վարդատոնը սկսվեց իր մեջ վերածնված նոր ավանդույթով, որի ակունքներում Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանն է: Ժամանակին հայ ու վրացի գրողներն ու հասարակական գործիչները հենց Թումանյանի տանից (Ամաղլեբա 18), մի-մի վարդ ձեռքերին քայլել են դեպի աշուղի գերեզման՝ Սուրբ Գեւորգ եկեղեցու գավիթ, ճանապարհին պատմելով Սայաթ-Նովայի մասին ու իրենց շարքերը հավելել անցորդներով: Մեր օրերի քայլարշավի մանակիցները նույնպես, մայիսյան վերջին կիրակի օրը, Վարդատոնին, վարդերը ձեռքերին քայլեցին ու թբիլիսյան տոնի ապագա տերերին փոխանցեցին օրվա անհրաժեշտությունը: Հասնելով Սուրբ Գեւորգ եկեղեցի, որի դարպասների մոտ՝ ըստ ավանդության պարսից սրից սպանվել է Սայաթ-Նովան, ներկաները մասնակցեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ պատարագի, որը մատուցեց Տեր Վիրապ քահանա Ղազարյանը: Հավարտ արարողության, Սայաթ-Նովայի գերեզմանի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ: Երգչի անկորնչելի հիշատակի մասին խոսք ասաց թեմական առաջնորդը:

Նիկա Օվսյաննիկով

Այնուհետեւ Գորգասալու հրապարակում կայացավ ժողովրդական մեծ տոնախմբություն, որը կազմակերպել էր «Վրացահայերի միությունը»՝ Թբիլիսիի քաղաքապետարանի, Հայաստանի Մշակույթի նախարարության, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի եւ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի աջակցությամբ: Հանդիսույթի պաշտոնական մասը վարում էր «Վրացահայերի միության» նախագահ Մարի Առաքելովան, որին հաջորդած գեղարվեստականը՝ դերասանուհի Նանո Պողոսյանը:

Մայրաքաղաքի ամենակոլորիտային հրապարակն իր գիրկն էր առել Վրաստանի տարբեր անկյուններից՝ Բաթումիի, Օզուրգեթիի, Ախալքալաքիի, Ախալցիխեի, Նինոծմինդայի, Ծալկայի, Մառնեուլիի մունիցիպալիտետներից, Հայաստանից ժամանած հյուրերի՝ այդ թվում Հայաստանի գրողների միության պատվիրակությանը՝ նախագահ Էդվարդ Միլիտոնյանի ղեկավարությամբ: Այստեղ էին Վրաստանի իշխանության ներկայացուցիչներ, Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետներ:

Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Դավիթ Ջանազյանը արժեւորեց Սայաթ-Նովայի գրական ժառանգության դերը աշուղական արվեստում եւ նրա բարոյական, մարդասիրական, ժողովուրդների բարեկամության մնայուն գաղափարները, որոնք սերունդներին փոխանցելու կարեւոր գործոնը համարեց թբիլիսյան ու հայաստանյան «Վարդատոները»:

Ձախից՝ Մաղվալա Գոնաշվիլին, Էդվարդ Միլիտոնյանը եւ Մարի Առաքելովան

Խոսելով տոնի մասին, Թբիլիսիի սակրեբուլոյի փոխնախագահ Ջուրաբ Աբաշիձեն ընդգծեց, որ Վարդատոնը լավագույն խորհրդանիշն է երկու բարեկամ ժողովուրդների, որը տոնելու պատիվն ունի Թբիլիսին:

Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին նշեց, որ Սայաթ-Նովայի խոսքն արդեն 300 տարի շարունակում է հայ ու վրաց ժողովուրդների ամենակարեւոր ուղերձը մնալ ու համախմբմանը ծառայել: Նա ուրախությամբ խոսեց վրաց ու հայ գրողների միջեւ ձեւավորված արդյունավետ կապերի մասին՝ խոսքի ավարտին «Տիցիան Տաբիձեի անվան մրցանակը» հանձնելով հայ գործընկերոջը՝ Էդվարդ Միլիտոնյանին:

Ներկաներին հայերեն, վրացերեն եւ ադրբեջաներեն ողջունեց Վրաստանի խորհրդարանի նախկին պատգամավոր, նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, ով, ի դեպ, 45-րդ անգամ էր մասնակցում Վարդատոնին:

Հաճելի էր հատկապես Վարդատոնին տեսնել նրանց, ում ծնողներին տեսել ու լսել են մեր ծնողները, տատիկներն ու պապիկները: Այդ տեսանկյունից խորհրդանշական էր վրաց անվանի բանաստեղծ, Վարդատոնի մշտական մասնակից ու Սայաթ-Նովային ձոնված բանաստեղծությունների հեղինակ Իոսեբ Նոնեշվիլու (1918-1980) որդու Անդրիա Ափաքիձեի անվան հնագիտական ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ալեքսանդր Նոնեշվիլու ներկայությունն ու խոսքը. *«Սայաթ-Նովան թողել է իր «կոդեքսը», այսպես ասած սահմանադրությունը՝ հայ, վրացի ու ադրբեջանցի ժողովուրդների համար, որպեսզի եթե տարաձայնություն լինի ու Աստված մի արասցե թշնամանք, ապա անմիջապես հիշենք Սայաթ-Նովային, նրա հզոր պոեզիան, կյանքն ու սխրանքը: Ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ լավագույն ընկեր Վան Բայբուրթյանին, ով հայ-վրացական բարեկամության մեջ իր մեծ ներդրումն ունի: Ընկերություն են արել մեր հայրերը, այսօր՝ մենք, վաղը՝ մեր զավակները եւ այդպես շարունակ, հավերժորեն»:*

Ալեքսանդր Նոնեշվիլի

Վրացերեն եւ, ապա հրաշալի հայերեն էր Վարդատոնի մեկ այլ նվիրյալ, նախկինում Հայաստանում Վրաստանի դեսպանատան դիվանագետ, այժմ Վրաստանի Արտաքին գործերի նախարարության աշխատակից, հայագետ Նինո Ափցիաուրու որդու՝ Նիկա Օվսյաննիկովի խոսքը. *«Տասնվեց տարի ապրել եմ Երեւանում: Հենց Սայաթ-Նովայի անվան փողոցում արել առաջին քայլերս, արտաբերել առաջին բառս: Սկզբում Սայաթ-Նովան ինձ համար Երեւանի կոնսերվատորիայի դիմաց պուրակում կանգնած քամանչայով տղամարդ էր: Հետո իմացա, որ նա անսահմանորեն սիրել է Վրաստանը: Սայաթ-Նովան հենց խորհրդանիշն էր այդ հավատարմության ու սիրո, նա Թբիլիսիի էշխն էր, լազաթը... Եվ այսօր, 300 տարի անց պոետը կրկին երեք լեզուներով հիշեցնում է, որ խաղաղ Կովկասի ապագան պայմանավորված է հարեւանների բարիդրացիական հարաբերություններով: Սիրենք ու հարգենք իրար Սայաթ-Նովայի նման ու հաստատ կփրկվենք»:*

Վարդատոնի գեղարվեստական մասը կրկին զարդարեցին Հայաստանի Հանրային ռադիոյի աշուղական երգի Սայաթ-Նովա պետական վաստակավոր համույթը՝ ծնունդով թբիլիսցի, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի ղեկավարությամբ, վրացական «Քսովրելեբի» անսամբլը, Երեւանի պետհամալսարանի Շառլ Ազնավուրի անվան մշակութային կենտրոնի պարային համույթը, ծնունդով Նինոծմինդայի մունիցիպալիտետի Ղաուրմա գյուղից, այժմ երեւանաբնակ աշուղ Լեյլի Եփրիկյանը, հայ ու վրացի սիրված երգիչներ Արմեն Մանիջոյանը, Ռաֆֆի Հակոբյանը, Էլդար Շոշիտաշվիլին, Նինա Կարապետյանը, Հենրիխ Պետրոսյանը, Աիդա Բազոյանը, «Ախալցիխե» ազգագրական պարի համույթը (գեղ.ղեկ.՝ Վերոնիկա Համբարյան), Թբիլիսիի «Ջեյրան» (գեղ.ղեկ.՝ Սվետլանա Երիցյան), «Վանք» (գեղ.ղեկ.՝ Լիանա Կաշավանիձե) պարային համույթները, «Հայարտուն» կենտրոնի դուդուկահարների խումբը (ղեկ.՝ Իվանե Մկրտչյան):

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԴՊՐՈՑ

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՂՈՂԱՆՋՆԵՐՈՎ՝ ԴԵՊԻ ՄԵԾ ԿՅԱՆՔ

ԹԲԻԼԻՍԻ

ԹԱՄԱՐ ՄԱՃԱՐԱՇՎԻԼԻ. «ՕԳՆԵՆՔ ԿՅԱՆՔ ՏԱԼ ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ»

Մայիսի 20-ին Գլդանի թաղամասում գտնվող Թբիլիսիի թիվ 132 հանրային դպրոցի 12-րդ դասարանի աշակերտների համար հնչեց «Վերջին զանգը»: Դպրոցին հրաժեշտ տվեց վեց աշակերտ: Այո, դա կրթօջախի ամենափոքրաքանակ դասարանն էր, նրա, այսպես ասած, հայկական բաժինը, որի գոյատեւումը հնարավոր էր դարձել դպրոցի տնօրեն Թամար Մաճարաշվիլու շնորհիվ:

- Ցավոք, այս շրջանավարտները վերջինն էին մեր դպրոցի հայկական բաժնում, սակայն դեռ ուշ չէ: Բերեք 15 աշակերտ, եւ ես կբացեմ հայկական բաժինը,- իր խոսքում շեշտեց տնօրենը:

Օրվա հերոսները՝ Լիկա Ղազարյանը, Վիկտորյա Բախչոյանը, Արմեն Մարտիգյանը, քույր-եղբայր Եվա եւ Դանիել Սարոյանները, Սարգիս Խատոյանը իրենց երախտիքը բերեցին սիրելի տնօրենին, դասղեկին՝ Հասմիկ Դոնականյանին, ավանդող ուսուցիչներին:

ՄԱՌՆԵՈՒԼԻ

ՆՐԱՆՔ ԿԴԱՌՆԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐԺԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Մայիսի 20-ին, Մառնեուլիի մունիցիպալիտետի Աղքյորփի հայաբնակ գյուղի դպրոցում հնչեց 12-րդ դասարանցիների «Վերջին զանգը»:

Ընդհանուր խառնաշփոթի մեջ բոլորը ժպտում են: Շրջանավարտների կողքին են երկրում հարգված ու ճանաչված, դպրոցի վրաց լեզվի ուսուցիչ, տնօրեն Վիոլետա Սուքիասյանը, դասղեկ՝ դպրոցի քիմիա-բիոլոգիա առարկաների ջանադիր եւ բազմավաստակ ուսուցիչ Ջվարթ Մելիքջանյանը, խորհրդատու ուսուցիչ, վրացերեն լեզվի մասնագետ Նարիման Մելիքիձեն, ռուսերեն լեզվի ուսուցիչ Նինո Կելիշվիլին, մյուս բոլոր ուսուցիչներն ու ծնողները: Բոլորը հույսերով ու մաղթանքներով ճանապարհում են իրենց կրթօջախի 77-րդ շրջանավարտներին:

ԲՈՐԺՈՄԻ

Ինչպես «Վրաստան» թերթին հաղորդեց Բորժոմիի մունիցիպալիտետի Մոլիթ գյուղի դպրոցի տնօրեն Ալբերտ Հարությունյանը, Տաբածղուրի գյուղն ունի 7 շրջանավարտ, 4 առաջին դասարանցի: Բալանթա գյուղի հայկական բաժնի շրջանավարտների թիվը 3-ն է, դպրոցի վրացերենի բաժինը ունի 1 շրջանավարտ, առաջին դասարանում՝ 2 աշակերտ: Մոլիթի գյուղի հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի ավարտողների թիվը 5-ն է, առաջին դասարան ընդունվածներինը՝ 2:

Խորագրի նյութերը պատրաստեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Մայիսի 24-ից Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը սկսել է Վրաստանի հանրային հաստատություններում առաջին դասարանցիների համընդհանուր էլեկտրոնային գրանցումը, որը կավարտվի հունիսի 15-ին:

Կրթության նախարարությունից հայտնում են, որ գրանցումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքի՝ register.emis.ge-ի միջոցով՝ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից:

Երեխայի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը դպրոցներ կներկայացվեն 2022 թվականի հունիսի 16-ից մինչեւ հունիսի 30-ը: Սահմանված ժամկետներում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում գրանցումն ավտոմատ կերպով կչեղարկվի:

Վրաստանի հանրակրթական հաստատության առաջին դասարան սովորողին ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերից են աշակերտի օրինական ներկայացուցչի դիմումը, որը պետք է ներառի օրինական ներկայացուցչի բնակության վայրի եւ հեռախոսահամարի մասին տեղեկատվություն, աշակերտի ծննդյան վկայականի կամ նույնականացման վկայականի պատճենը կամ Վրաստանում բնակության թույլտվության պատճենը (եթե այդպիսիք կան), օրինական ներկայացուցչի նույնականացման քարտի պատճենը կամ Վրաստանում բնակությունը հաստատող փաստաթղթի պատճենը (եթե այդպիսիք կան):

Փաստաթղթերը օտար լեզվով ներկայացնելու դեպքում դրանք պետք է ուղեկցվեն վրացերեն թարգմանությամբ՝ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կանոններով:

Հիշեցնենք, որ «Հանրակրթության մասին» օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ 2022-2023 ուսումնական տարում առաջին դասարան կընդունվեն այն երեխաները, ովքեր մինչեւ հոկտեմբերի 1-ը կդառնան 6 տարեկան:

Որոշումն ընդունվել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության եւ խորհրդարանի կրթության եւ գիտության հանձնաժողովի համատեղ որոշմամբ՝ քաղաքացիների խնդրանքով:

Երրորդ փուլի՝ համընդհանուր էլեկտրոնային գրանցման ավարտից հետո, հուլիսի 4-ից հուլիսի 12-ը կմեկնարկի դպրոցների գրանցման 4-րդ փուլը: Այս փուլում թափուր տեղերը կօգտագործվեն I, II եւ III փուլերում չգրանցված կամ իրենց գրանցումը փոխել ցանկացող աշակերտների գրանցման համար: Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը կոչ է անում ծնողներին ուշադիր ուսումնասիրել գրանցման պայմանները, որպեսզի իրենց երեխան կարողանա ժամանակին եւ անխափան մուտք գործել դպրոց:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՐԱՏԱՊ

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳՆԵՐԸ ՆՎԱԶԵՑԻՆ 10-20 ԹԵԹՐԻՈՎ

ԴԱ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՆ ԷՐ, ՈՐ ՀԱՋՈՂՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ

Ի պատասխան հաղորդակցությունների գործակալության կողմից կառավարությանը ներկայացրած հաշվետվության՝ նավթամթերքներ ներկրողները պատասխանեցին այդ հումքի 20 թեթրիով էժանացմամբ:

Չնայած բազում ապացույցների, որ վառելանյութի գները արհեստականորեն էին ավելացված, եւ իրականում առկա էր սպառողական գինը 50-60 թեթրիով նվազեցման հնարավորություն, ոլորտի ներկայացուցիչները պահպանեցին բարձր գները, ինչը վնաս է հասցնում բոլորին՝ շարքային քաղաքացիներին, տնտեսության բոլոր ոլորտներին: Ամենայն հավանականությամբ, վառելանյութի սպառողական գների նվազեցման հերթական փուլը չի նախատեսվում, թեեւ մրցակցության գործակալությունը հավաստիացնում է, որ կշարունակի ոլորտի մոնիտորինգը:

Հատկանշական է, որ մի քանի օր առաջ չբրենդավորված ավտոլցակայանները 5-10 թեթրիով նվազեցրին սպառողական գները, իսկ բրենդավորված ավտոկայաններում այդ ցուցանիշը կազմեց 20 թեթրի: Թեեւ այդ հանգամանքը գրեթե ոչ մի ազդեցություն չունեցավ բնակչության վրա: Փորձագետների հավաստմամբ, գների տարբերությունը գրեթե չի զգացվի, եթե դրա կտրուկ փոփոխությունը չլինի:

Վառելանյութի սպառողական գնի նվազեցման պատճառը Վրաստանի էկոնոմիկայի նախարար Լեւան Դավիթաշվիլին համարում է վառելանյութի շուկայի վերաբաշխումը: Երկրի խորհրդարանում իր ելույթի ժամանակ նախարարը նշեց, որ կառավարությունը, մրցակցության գործակալության հետ միասին, մանրամասն ուսումնասիրեց վառելանյութի շուկայում ստեղծված իրավիճակը պարզելու համար, թե ինչ հնարավորություններ կան սպառողական գների նվազեցման ուղղությամբ:

Հարցին, թե նավթամթերքների ընկերություններն ունեի՞ն, արդյոք, սպառողական գների առավել նվազեցման հնարավորություն, եւ ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեին սպառողական գների վրա ազդեցություն գործելու համար, Մրցակցության ազգային գործակալության փոխտնօրեն Լեւան Կալանդաձեն պատասխանեց, որ ոլորտում ակտիվ մոնիտորինգ է իրականացվում, հստակեցվում է, թե գերատեսչությունն ինչպես է ներգրավվելու սպառողական գների նվազեցման գործընթացին: Ինչպես տեսաք, գները մի փոքր նվազեցին:

- Թե որքանով է դա բավարար, դժվարանում եմ պատասխանել: Վառելանյութի շուկայի մոնիտորինգը շարունակվում է, հուսով ենք, կպարզվի, թե ինչպես ենք արձագանքելու այդ գործընթացին: Հավաստիացնում եմ, անհրաժեշտության դեպքում, մրցակցության գործակալությունը կընդունի համապատասխան որոշում,- հայտարարեց Լեւան Կալանդաձեն:

Հիշեցնենք, որ, չնայած Մրցակցության գործակալության կողմից երկրի կառավարությանը ներկայացրած հաշվետվությանը, նավթամթերքների գործարարները շարունակում են աշխատել բարձր շահույթով: Այսօր վստահությամբ կարելի է ասել, որ ինչպես գլոբալ, այնպես էլ՝ տեղական պարամետրերի հաշվառմամբ, վառելանյութի մեկ լիտրի հաշվով ընկերությունները ստանում են մոտ 60 թեթրիի մաքուր շահույթ: Ակնհայտ է, որ նման պարագայում կառավարությունը պարտավոր է անմիջապես արձագանքել: Ակնհայտ է նաեւ, որ վառելանյութի ոլորտի գործարարները, իրավիճակի լարվածության թուլացման նպատակով, հաշվի առնելով մրցակցության գործակալության հաշվետվությունը, ստիպված եղան վառելանյութի սպառողական գինը նվազեցնել 20 թեթրիով, ինչը, բնականաբար, բավարար համարել չի կարելի: Ակնհայտ է նաեւ, որ լարիի կուրսի ամրացումը չբավարարեց նավթամթերքի սպառողական գների նվազեցման պահանջները: Փորձագետների գնահատմամբ՝ վառելանյութի սպառողական ներկայիս գները ձեռնտու են միայն նավթամթերքի ներկրման գործարարությամբ զբաղվողներին եւ ոչ թե՝ բնակչությանն ու երկրում տնտեսական գործունեությամբ զբաղվող գործարարներին: Ըստ երեւույթին, ժամանակն է, որպեսզի կառավարությունն է'լ ավելի միջոցներ ձեռնարկի վառելանյութի շուկայում առողջ մրցակցային պայմաններ ստեղծելու համար:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ԼԻԲԵՐԹԻ ԲԱՆԿԻ» ՀԱՄԱՐ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏԻՎ Է ԲԱՑԱՌԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ ՍՊԱՍԱՐԿԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ

ԲԸ «Լիբերթի բանկը» հաղթեց ՀԻԻԱ «Սոցիալական սպասարկման գործակալության» կողմից հայտարարված «Դրամական փոխանցումների» հանձնման եւ գրանցման համար անհրաժեշտ բանկային սպասարկումների մրցույթում: Մրցույթում նախատեսված նոր պայմաններն ուժի մեջ կմտնեն 2023 թվականի հունվարից:

Ինչպես հայտարարեց «Լիբերթի բանկի» փոքր եւ միջին գործարարության ուղղությունների տնօրեն Վաժա Մենաբդեն՝ «Լիբերթի բանկի» համար վերոնշյալ սպասարկման իրականացումը տասնամյակների պատմություն ունի եւ հանդիսանում է նրա գործունեության գլխավոր ուղղությունը: «Լիբերթի բանկի» բացառիկ ենթակառույցները, համակարգերը, գործընթացներն ու աշխատակիցների գիտելիքներն ու ունակությունները լրիվությամբ հարմարեցվել են հենց այդ գործունեության օպտիմիզացման համար: Քսան տարվա ընթացքում «Լիբերթի բանկը» ստեղծել է դրամական փոխանցումների օպերատիվ անընդմեջ եւ անվտանգ ու երկրամասի համար աննախադեպ ու բացառիկ մասնաճյուղերի ցանց՝ ավելի քան 400 մասնաճյուղերն ու 100 շարժական սերվիսկենտրոնները սպասարկում են ավելի քան 1300 գյուղերի ու 64 մունիցիպալիտետների: Այդ թվում 5 մունիցիպալիտետներում գործում են միայն «Լիբերթի բանկի» սպասարկման կենտրոններ, իսկ 12-ում, «Լիբերթի բանկից» բացի, ներկայացված են մեկական այլ բանկեր: 1100 գյուղեր, որոնց սպասարկում է «Լիբերթի բանկը», գտնվում են մունիցիպալային կենտրոնից առնվազն 5 կիլոմետր հեռավորության վրա: Հատուկ նախապատրաստված աշխատակիցները, տներ այցելելով, սպասարկում են ավելի քան 30 հազար շահառուների, ովքեր ֆիզիկապես չեն կարող այցելել բանկ կամ ապրում են բարձրալեռ բնակավայրերում:

- «Լիբերթի բանկը» Վրաստանում խոշոր գործատուներից մեկն է, այն ունի ավելի քան 4500 աշխատակից:

Բանկը մշտապես բարելավում է սպասարկումները եւ իր շահառուներին առաջարկում բանկային սպասարկումների եւ ծառայությունների լրացուցիչ փաթեթներ ու արտոնությունների հատուկ ծրագրեր:

2017 թվականից «Լիբերթի բանկը» իրականացնում է կորպորացիոն սոցիալական պատասխանատվության բացառիկ ծրագրեր եւ նախագծեր, որոնք հատուկ մշակված են վերոնշյալ պայմանագրի շահառուների համար:

2021 թվականին բանկի կողմից անցկացված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բանկի սպասարկումներից գոհ է շահառուների 90 տոկոսը:

Ուրախ ենք, որ վերոնշյալ մրցույթն անցկացվեց թափանցիկության եւ, ամենակարեւորը, շահագրգռված բոլոր կողմերի ներգրավմամբ: Հիշեցնենք, որ «Լիբերթի բանկը» ինքը պահանջեց վաղաժամկետ անցկացնել մրցույթը եւ, որ հաղթողը հայտարարվեց բաց ու թափանցիկ մրցակցության պայմաններում: Դա մեզ համար պատիվ է եւ, միաժամանակ, մեծ պատասխանատվություն:

Նոր «Լիբերթի բանկի» նոր ռազմավարության շրջանակներում՝ մենք կշարունակենք առաջընթացը, ծրագրել ենք նորույթներ, նոր առաջարկություններ բանկային սպասարկումներում ու ծառայություններում եւ, համոզված եմ, որ հաջորդ տարիների ընթացքում արժանապատվորեն կսպասարկենք մեր շահառուներին, առանձնապես ավագ սերնդի սպառողներին,- ընդգծեց Վաժա Մենաբդեն:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍԸ ԳԵՐԱԿԱՏԱՐՎԵԼ Է 147 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄՈՎ

ՏՆՏԵՍՎԱՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ 146 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ԳՈՒՄԱՐ

Մայիսի 31-ին, Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում, Հայաստանի 2021 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկման ժամանակ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր խոսքում նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում բյուջեի եկամտային մասը գերակատարվել է 147 միլիարդ դրամով:

- Տնտեսական աճի ցուցանիշը 2021 թվականին նախատեսվածից ավելի եղավ, 5,3 տոկոս տնտեսական աճ ունեցանք: Նշեմ, որ ի սկզբանե 3,1 տոկոս է նախատեսված եղել: Ուզում եմ հիշեցնել նաեւ 2021 թվականը, թե ինչ իրավիճակում ենք եղել, եւ այս առումով կարեւոր է ընդգծել, որ (բյուջեի) եկամտային մասը մենք գերակատարել ենք 147 միլիարդ դրամով: Ի՞նչ նկատի ունենք՝ գերակատարել ասելով: Երբ 2020 թվականին ընդունվում էր 2021 թվականի բյուջեի նախագիծը, եկամտային մաս էր արձանագրված եւ տարվա ընթացքում այդ եկամտային մասից՝ նախատեսվածից ավելի եկամուտ ենք հավաքել,- ասաց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց, որ եկամտային մասի հետ կապված օրենսդրական որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք լրացուցիչ եկամուտներ են բերել:

- Առաջին հերթին խոսքը պղնձի խտանյութի արտահանման տուրքի մասին է, որն այդ առումով մոտավորապես 24 միլիարդ դրամի լրացուցիչ եկամուտ է բերել բյուջեն,- նշեց վարչապետը:

Հայաստանի Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության ներկայացմանը, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ երկրի կառավարությունը 2021 թվականի ընթացքում տնտեսավարողներին է վերադարձրել 146 մլրդ դրամի ավելացված արժեքի հարկի գումար՝ 2017 թվականի 60 մլրդ դրամի համեմատ, այսինքն, ավելացված արժեքի հարկի վերադարձվող գումարն ավելացել է 140 տոկոսով:

ՄԱԿ-Ի ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԶՈՒՐԱԲ ՊՈԼՈԼԻԿԱՇՎԻԼԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 3-ին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունեց, ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով, Հայաստանում գտնվող ՁՀԿ-ի գլխավոր քարտուղար Զուրաբ Պոլոլիկաշվիլու գլխավորած պատվիրակությանը:

Իր հերթին, ՁՀԿ գլխավոր քարտուղարը կարեւորեց այն հանգամանքը, որ Covid-19 համավարակից հետո կազմակերպության առաջին նստաշրջանն անցկացվում է Երեւանում: Նա շնորհավորեց Հայաստանին՝ 2021-2025թթ. ժամանակահատվածի համար ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գործադիր խորհրդի անդամ ընտրվելու կապակցությամբ:

Հանդիպմանը գոհունակությամբ արձանագրվեց, որ Հայաստանի եւ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության միջեւ հարաբերությունները կայուն զարգանում են: Նախագահի խոսքով, զբոսաշրջությունը շատ կարեւոր ոլորտ է Հայաստանի համար եւ կառավարության կողմից հռչակվել է տնտեսության զարգացման գերակա ոլորտներից մեկը:

Հանդիպմանը մտքեր փոխանակվեցին՝ համավարակով պայմանավորված զբոսաշրջության ոլորտում ի հայտ եկած մի շարք մարտահրավերների հաղթահարման, զբոսաշրջության ոլորտի զարգացման նոր ուղենիշների մշակման եւ համագործակցության օրակարգն ավելի հարստացնելու շուրջ:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հրավերով Հայաստանում գտնվող ԵՀԽ պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանի:

Նորին Սրբությունը, ողջունելով պատվիրակության անդամներին, իր գնահատանքը հայտնեց ԵՀԽ-ին Հայաստանին եւ Արցախին ցուցաբերած զորակցության համար:

Հանդիպմանը կաթողիկոսը պատասխանեց նաեւ հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին արցախահայության անվտանգ եւ խաղաղ կյանքի ապահովմանը, գերիների վերադարձման խնդրին, տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատմանը, հայկական հոգեւոր արժեքների պահպանությանը եւ այդ ուղղությամբ Մայր Աթոռի կողմից իրականացվող աշխատանքներին:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ՝ Ն.ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ Վ.ՊՈՒՏԻՆԻ ՄԻՋԵՎ

Հունիսի 1-ին հեռախոսազրույց է տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի միջեւ:

Զրուցակիցները քննարկեցին Հայաստան-Ռուսաստան երկկողմ օրակարգի մի շարք հարցեր, անդրադարձել տարածաշրջանային խնդիրներին, հայ-ադրբեջանական սահմանային իրադրությանը, կոմունիկացիաների բացման խնդրին:

Նիկոլ Փաշինյանը ՌԴ նախագահի հետ տպավորություններ է կիսել Բրյուսելյան վերջին հանդիպումից եւ մտահոգություն հայտնել հանդիպմանը հաջորդած քննարկումների էության հետ կապ չունեցող մեկնաբանությունների առիթով:

ՆՊԱՍՏԱՌՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանում, նախորդ տարի վարչարարության արդյունքում, շուրջ 10 հազարով նվազել է նպաստառու ընտանիքների թիվը: Այդ մասին նշվեց Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ 2021թ. պետական բյուջեի հաշվետվության քննարկմանը:

Նշվեց, որ 2021-ին, պետբյուջեից տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց եւ երեխաների հիմնահարցերի լուծմանը փաստացի ուղղվել է շուրջ 7.3 մլրդ դրամ: Զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ ծախսվել է շուրջ 1.7 մլրդ դրամ:

Անապահով սոցիալական խմբերին աջակցության, անաշխատունակության դեպքում սոցիալական աջակցության, ժողովրդագրական վիճակի բարելավման ուղղությամբ ծախսվել է շուրջ 78.3 մլրդ դրամ, որից 30.4 մլրդ դրամն ուղղվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներին:

3760 ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Հայաստանի ուսումնական հաստատություններից ստացված տվյալների համաձայն՝ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համապատասխան ստորաբաժանումը քարտեզագրել եւ ամփոփել է 2021-2022 ուստարում Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրյա եւ սփյուռքահայ ուսանողների վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ բուհերի եւ երկրների: Այդ տվյալներով, 2021-2022թթ. ուսումնական տարում Հայաստանում գործող միջազգային բուհերում սովորող օտարերկրացի ուսանողների թիվը 354 է, իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող սփյուռքահայերի թիվը՝ 471:

Ընթացիկ ուսումնական տարում Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորում է 3.760 օտարերկրացի եւ 4.248 սփյուռքահայ ուսանող:

16 ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԿ ԵՐՐՈՐԴԸ ՃԽՈՒՄ Է

Ամեն տարի մայիսի 31-ին նշվում է «Առանց ծխախոտի» համաշխարհային օրը, որն ԱՀԿ-ն սահմանել է 1987 թվականին՝ հանրության ուշադրությունը ծխախոտի մահացու հետեւանքների վրա հրավիրելու համար: Ծխախոտը հանրային առողջության լուրջ սպառնալիքներից է: Ամեն տարի ավելի քան 8 միլիոն մարդ է մահանում ծխախոտի օգտագործման հետեւանքով: Նրանցից ավելի քան 7 միլիոնը ծխախոտ օգտագործողներ եւ նախկին օգտագործողներ են, իսկ ավելի քան 1,2 միլիոնը՝ չծխողներ, որոնք ենթարկվում են երկրորդային ծխի ազդեցությանը:

Հայաստանի առողջապահության նախարարությունը տեղեկացնում է, որ, Հայաստանում իրականացված հետազոտությունների տվյալների համաձայն, 16 տարեկանից բարձր բնակչության 27,9 տոկոսը ծխում է: Ծխողների գերակշիռ մասը տղամարդիկ են (տղամարդկանց՝ 51,5 տոկոսը, կանանց՝ 1,8 տոկոսը), դեռահասների շրջանում՝ կյանքում երբեւէ ծխախոտ օգտագործել են 15 տարեկան տղաների 21 տոկոսը եւ աղջիկների 3 տոկոսը:

Հայաստանում ամեն տարի ծխախոտով պայմանավորված հիվանդություններից մահանում է ավելի քան 5500 բնակիչ: Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների բոլոր տեսակները վնասակար են առողջության համար, չկա դրանց անվնաս չափաբաժին:

2020 թվականի փետրվարի 13-ին ընդունվել է «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» օրենք, որով նախատեսված սահմանափակումները տարածվում են ծխախոտային բոլոր արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների վրա:

Օրենքի համաձայն՝ արգելվում են ծխախոտի օգտագործումը բոլոր փակ եւ որոշ բաց հանրային վայրերում (այդ թվում՝ առողջապահական, կրթական, մշակույթի հաստատություններում, հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, փակ եւ բաց սննդի օբյեկտներում), գովազդի, իրացման (վաճառքի) խթանման եւ հովանավորության բոլոր ձեւերը, գործում են նաեւ այլ դրույթներ: Օրենքը միտված է ներկա եւ ապագա սերունդներին պաշտպանելու առողջության վրա ծխախոտային արտադրատեսակների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցությունից, ինչպես նաեւ՝ բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, դրանց փոխարինիչների օգտագործումը որպես անառողջ եւ մերժելի վարքագիծ արմատավորելը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒՆԻՍ

05.06.2022 Հոգեգալուստ (Պենտեկոստե)

Առաքյալների վրա Սուրբ Հոգու իջման հիշատակության տոնն է, որ տեղի է ունեցել Սբ. Հարության հիսուներորդ օրը: Այդ պատճառով էլ Հոգեգալուստը միշտ տոնում են Զատկից հիսուն օր հետո:

Հայ Առաքելական եկեղեցու կողմից սահմանված տարվա չորս եղանակի պահքերից սա ամառնամուտի շաբաթապահքն է: Ամառվա այս պահքն սկսվում է Հոգեգալստյան կիրակիի հաջորդ օրը (պահքի բարեկենդանը՝ Հոգեգալստյան կիրակի): Զատկի օրվա փոփոխման հետ՝ պահքի սկիզբը կարող է փոփոխվել մայիսի 11-ից մինչեւ հունիսի 14-ն ընկած ժամանակահատվածում: Մյուս եղանակների պահքերի նման, այս պահքը եւս տեւում է 5 օր՝ երկուշաբթիից մինչեւ ուրբաթ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՑ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ԵՐԵՎԱՆ-ԲԱԹՈՒՄԻ-ԵՐԵՎԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը հունիսի 14-ից կսկսի իրականացնել ամառային ուղեւորափոխադրումներ՝ Երեւան-Բաթումի-Երեւան երթուղով:

Ամառային ուղեւորափոխադրումների սեզոնը կտեւի մինչեւ սեպտեմբերի 30-ը:

Ի տարբերություն նախորդ տարիների՝ Բաթումիի երթուղով փոխադրումը կիրականացվի շաբաթական երկու անգամ՝ Երեւանից երեքշաբթի եւ ուրբաթ օրերին, Բաթումից մեկնումը՝ չորեքշաբթի եւ շաբաթ օրերին:

Շաբաթվա մյուս օրերին ուղեւորափոխադրում կիրականացնի Երեւան-Թբիլիսի-Երեւան երթուղով, ուղեւորություն Երեւանից՝ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ, կիրակի օրերին, իսկ ուղեւորություն Թբիլիսիից՝ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, կիրակի օրերին: Երկու միջազգային երթուղիների համատեղումը կապված է Թբիլիսիի ուղղությամբ պահանջարկի մեծացման հետ:

Երկու միջազգային գնացքները ներառում են ժամանակակից, հարմարավետ վագոններ, որոնք ձեռք են բերվել ՀԿԵ-ի կողմից 2021 թվականին: Վագոնները համալրված են ժամանակակից օդորակման համակարգով, Wi-Fi-ով, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններով:

ՍՊՈՐՏ

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ. ՄԵՐ ԱՐՏՅՈՒՇ ԳՈՄՑՅԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ 4 ՄԵԴԱԼՈՎ՝ ՎՐԱՍՏԱՆԸ ԹԻՄԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՂԹՈՂ

Մայիսի 23-30-ը Երեւանում անցկացվեց բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցեց 39 երկիր ներկայացնող 219 մարզիկ:

Եվրոպայի չեմպիոն Արտյուշ Գոմցյանը՝ Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանի հետ

Երեւանյան մրցաշարում 57-60 կգ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեց ախալքալաքցի Արտյուշ Գոմցյանը:

«Վրաստան» թերթի հետ հեռախոսազրույցում Արտյուշի մարզիչ, Վրաստանի հավաքականի մարզիչներից, Վրաստանի վաստակավոր մարզիչ, Ախալքալաքիի մարզահամալիրի տնօրեն Ատոմ Էլիզբարյանն ասաց.

- Մեզ համար, իրոք, ուրախալի օր է: Երեւանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի հեռակա բաժնի ուսանող, մեր ախալքալաքցի, 23-ամյա Արտյուշ Գոմցյանը հիանալի հանդես եկավ Երեւանյան մրցաշարում, հաղթելով չորս մրցամարտերում: Նա Ախալքալաքիում առաջինը դառնալով Եվրոպայի չեմպիոն, գլխավորեց ախալքալաքցի այն բռնցքամարտիկների ցուցակը, ովքեր արժանացել են մայրցամաքի, աշխարհի առաջնության արծաթե եւ բրոնզե մեդալների, մասնակցել միջազգային մրցաշարերի:

Երեւանյան մրցաշարում Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցած 4 (երեք ոսկե, մեկ արծաթե) մեդալներով դարձավ թիմային հաշվարկի հաղթող: Արտյուշից բացի, Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեցին Գեորգի Կուշինաշվիլին (80-86 կգ), Սախիլ Ալախվերդովը (46-48 կգ քաշային կարգ), իսկ 63,5-67 կգ քաշային կարգում՝ Լաշա Գուրուլին արժանացավ արծաթե մեդալի,- հայտնեց Ատոմ Էլիզբարյանը:

Հայաստանի հավաքականը եւս իր ակտիվում գրանցեց 4 (մեկ ոսկե, երկու արծաթե եւ մեկ բրոնզե մեդալներ) եւ թիմային հաշվարկում զբաղեցրեց 5-րդ հորիզոնականը: Երրորդ անգամ Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց Հովհաննես Բաչկովը (63,5 կգ), Եվրոպայի փոխչեմպիոն դարձան Արթուր Բազեյանը (57 կգ) եւ Ռաֆայել Հովհաննիսյանը (81 կգ), իսկ Նարեկ Մանասյանը (92 կգ) նվաճեց բրոնզե մեդալ:

ԾԱՆՐԱՄԱՐՏ. ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՈՒ ԱՐԾԱԹԵ, ՄԵԿ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼ՝ ՎՐԱՍՏԱՆԻ, ՄԵԿ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԳԱՆՁԱՐԿՂՈՒՄ

Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում շարունակվում է Եվրոպայի ծանրամարտի հոբելյանական 1000-րդ առաջնությունը, որին մասնակցում են 39 երկրների 324 մարզիկ-մարզուհիներ:

Մրցաշարի բացմանը վրաց հանրահայտ ծանրամարտիկ, աշխարհի, Եվրոպայի եւ Օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոն ու ռեկորդակիր Լաշա Տալախաձեին հանձնվեց 2021 թվականի լավագույն ծանրորդի մրցանակը:

Ինչ վերաբերում է առաջնության ընթացքին, ապա, այսօրվա դրությամբ, Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցել է երկու արծաթե եւ մեկ բրոնզե մեդալ: Աչքի են ընկել 67կգ քաշային կարգում Շոթա Միշվելիձեն (արծաթ), 73կգ քաշային կարգում՝ Կախի Ասանիձեն (արծաթ) եւ 89կգ քաշային կարգում՝ Ռեւազ Դավիթաձեն (բրոնզ):

Ներկա դրությամբ Հայաստանի հավաքականի կազմում աչքի է ընկել Ռաֆիկ Հարությունյանը, ով 81կգ քաշային կարգում նվաճեց մայրցամաքի ուժեղագույնի կոչումը:

Առաջնությունը ընթացքի մեջ է:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Դանդաղ, կամաց: 8.Արձակագիր, գեղանկարիչ ... Այվազյան: 9.Հողի մակերեսի տարածաչափ = 4047 քմ: 10.Բուլղարացի կույր պայծառատես: 13.Աչքի ... թռցնող: 18.Մեխանիզմ: 19.Ֆիզիկայի բաժին: 22.Ժողովրդական երգիչ: 23.Քիմիկոս՝ ... Մենդելեեւ: 27.Այրված փայտի մնացորդ: 29.Ջրլող թռչուն: 30.Վանդակածող: 31.Աքցան: 33.Նոր: 36.Մեքենան վարելու մաս: 37.Երկրի, խորհրդարանի ղեկավար: 41.Գյուղ Սամցխե-Ջավախեթիում: 42.Տավար: 45.Միապետների նախկին պաշտոնական անվանումը Ռուսաստանում: 47.Հայաստանի ժողովրդական արտիստ ... Խաչվանքյան: 48.Աֆրիկյան եւ եվրոպական երաժշտական ոճերի սինթեզման արդյունքում առաջացած երաժշտական արվեստի ձեւ: 49.Ցովային հսկա կաթնասուն: 50.Ստորգետնյա կառույց: 51.Էլեկտրական հոսանքի լարվածության չափման միավոր: 53.Ցխախոտի տեսակ: 54.Ռուսական էստրադային երգիչ: 55.Վրաց դերասանուհի ... Սուխիտաշվիլի: 56.Ամեն ինչին տեղյակ: 57.Փոքր տուն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Տրվում է ծնված օրից: 2.Վրաց շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 3.Անծանոթ: 4.Ցաղրախաղ, զավեշտախաղ: 5.Կանացի գլխաշոր արեւելքում: 6.Արեւմտահայ բանաստեղծ ... Մեծարենց: 11.Գյուղ Շիդա Քարթլիում: 12.Բանաստեղծ, թարգմանիչ Աշոտ ...: 14.Նազարի «հոգեառը»: 15.Սուրճի նստվածք: 16.Կնճիթավոր խոշոր կենդանի: 17.Պետություն Աֆրիկայում: 20.Կառավարության անդամ: 21.Հյուսնի գործիք: 24....-մանկապարտեզ: 25.Գեշ: 26.Մանելու գործիք: 28.Աստվածաշնչյան մարգարե: 32.Կիսակապիկ վայրի կենդանի: 34.Անխառն, անեղծ: 35.Պոմպ: 38.Միտքը գրավոր եղանակով փոխանցելու ձեւ: 39.Բանահյուսական ժանր: 40.Խաղաղության պաշտպանության միջազգային կազմակերպություն: 43.Փայտից փորված կոշիկ: 44.Մտադրություն, իղձ: 46.Ջամուսնացած: 49.Ամերիկացի երգչուհի ...: 50.Գլխի զարդարանք, որը հանդիսանում է միապետական հնշխանության խորհրդանիշ: 51.Հոռի, անպիտան: 52.Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով ներկայիս պետնախարարի տեղակալ ... Գիգաուրի:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ջալալ: 4.Քաթար: 7.Բալ: 9.Ջալալօղլի: 10.Ջալ: 11.Աթար: 12.Սպի: 17.Էր: 18.Ջիվանի: 20.Նալիկ: 21.Ալ: 22.Որակ: 24.Կարա: 25.Ռեն: 26.Ադան: 28.Այն: 29.Ուշ: 31.Ռեն: 32.Մի: 34.Շեր: 35.Իսանի: 37.Սենատ: 39.Ալի: 40.Ջալ: 41.Մանուշ: 42.Դառնալ: 45.Սան: 46.Դաս: 47.Արու: 48.Երեկ: 49.Գավ: 50.Ամիս: 51.Կարին: 53.Ցետկին: 54.Թան: 55.Են:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ջաջուռ: 2.Լալա: 3.Լիլիթ: 4.Քաղցր: 5.Թվիքս: 6.Ռաֆֆի: 7.Բազուկ: 8.Լալվար: 11.Ապարան: 13.Պալյան: 14.Ջիլ: 15.Ջնելաձե: 16.Ակոռի: 17.Էմանուել: 18.Ջափարիձե: 19.Իսայի: 23.Ռե: 24.Կանաչ: 27.Դես: 30.Շրի: 32.Միլան: 33.Ատլաս: 34.Շահնամե: 36.Նամակ: 37.Սյուն: 38.Նու: 42.Դավիթ: 43.Արի: 44.Լուսին: 45.Սերտ: 46.Դար: 47.Գալ: 52.Նա:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅԵՑՈ ՄՈՆԱՖԱՐՄՈ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՖԱՔՍ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆԻ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445